ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«29» 01 2024 թ.
№ ՊԱՇՊ-գԳԴ-56

«ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ -ին
ՀՎՀՀ 28112687
ՀՀ Երևան, Հաղթանակ 10 փ. տ. 14
հեռ.045 333 757

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ի միջև 15. 05. 2023թ.. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-1/1-13 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ն պարտավոր էր 2023թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 30.09.2023թ., մատակարարել 50 հատ օպտիկամանրաթելային փոխարկիչ:

Քանի որ վերոնշյալ ապրանքները մինչև 26.12.2023թ.-ը չեն մատակարարվել (ընդհանրապես չեն մատակարարվել), ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2024թ. հունվարի 29-ին** միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **1550** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 26.12.2023թ. ներառյալ, և **250** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի 2-րդ պարբերության համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **5000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին, և որակավորման ապահովման գումարը կազմում է **7500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2024թ. փետրվարի 7-ը ներառյալ, Ձեր կողմից վճարվի վերը նշված **5000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **7500** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԱԼԵՔՍԱՆ ՄԻՔԱԵԼՅԱՆ ԴԱՎԻԴԻ» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, մինչև 2024թ.փետրվարի 7-ը ներառյալ, ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ